Չարենցավան համայնքի ղեկավար
Պարոն Հ. Կ. Շահգալդյանին

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Հ.Կ. Շահգալդյան

Տեղեկացնում ենք, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 21-ի N09-Ն հրամանի՝ ՀՀ պետական եվ համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակի **և «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի, 1-ի մասի 9-րդ կետի,** որը սահմանում է պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վարչական, մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները՝ անհրաժեշտություն է առաջացել Չարենցավան համայնքի Բջնի գյուղի մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ին հատկացնել՝

1. **Այգեպան՝ 0,5 հաստիքային միավոր**

Նկատի առնել այն, որ Բուլղարիայի դեսպանատան կողմից բարեգործական ծրագրի հիմունքներով Բջնի գյուղի մսուր մանկապարտեզի բակային տարածքում կառուցվել է 120քմ օրգանիկ ջերմոց, որի նպատակն է մշակել օրգանիկ բանջարաբոստանային մշակաբույսեր և մանկապարտեզի սաներին ապահովել և մատակարարել առողջ սնունդ:

Խնդրում եմ Ձեր համաձայնությունը և թույլտվությունը:

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ **Գայանե Գրիգորյան**

19 փետրվար 2025թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ Է 19. 02. 20 25 Թ.
Մուտք N 769 Թերթ N 04